# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Երևան
2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ....................6

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....................7

ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ....................8

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....................9

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....................11
2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ....................14
3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ....................20
4. ՍՏԱՑՎԵԼԻՔ ՖՈՆԴԵՐ ....................21
5. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ....................26
6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ....................27
7. ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ....................27
8. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ....................28
9. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ....................30
10. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ....................31
11. ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ....................32
12. ՀԱՐԿԵՐ....................34
13. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԵՐ ....................34
14. ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ....................34


| | |
|---|---|
| Հիմնադրամի գտնվելու վայրը՝ | ՀՀ, ք. Երևան 0037, Ուլնեցու 31 |
| Իրավական ձևը՝ | Հիմնադրամ |
| Հիմնական գործունեության նկարագիրը՝ | Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում |
| Գործադիր տնօրեն՝ | Սարգիս Բաղինյան |

BDO

Հեռ. +37460 528899
Էլ. փոստ` bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ("ՀՏԶՀ" կամ "Հիմնադրամ") ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, կապիտալում փոփոխությունների, և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՀՏԶՀ-ի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՈՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Գ. Սնհարի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

BDO

Հեռ. +37460 528899
Էլ.փոստ. bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

30 հունիսի, 2023թ.

Վահագն Սահակյան, FCCA

Տնօրեն

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| | Ծնթ. | 31.12.2022<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 3 | 93,238 | 92,946 |
| Ստացվելիք ֆոնդեր | 4 | 250,880,321 | 338,972,422 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **250,973,559** | **339,065,369** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Կանխավճարներ | 5 | 15,856,398 | 19,456,683 |
| Դրամական միջոցներ | 6 | 18,821,038 | 24,068,021 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **34,677,436** | **43,524,704** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **285,650,995** | **382,590,073** |
| **ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **Կապիտալ** | | | |
| Հիմնադիրների ներդրումներ | 7 | 151,631 | 151,631 |
| Կուտակված հավելուրդ /(պակասուրդ) | | 1,542,907 | 200,838 |
| **Ընդամենը կապիտալ** | | **1,694,538** | **352,469** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Շնորհներ կառավարությունից | 8 | 275,230,755 | 374,452,505 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **275,230,755** | **374,452,505** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 9 | 8,725,702 | 7,785,098 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **8,725,702** | **7,785,098** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **285,650,995** | **382,590,073** |

*Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բաղինյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| | Ծնթ. | 2022<br>ԱՄՆ դոլար | 2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| Ծրագրային ծախսեր | 10 | (65,174,725) | (54,560,775) |
| Եկամուտ շնորհներից | 8 | 65,174,725 | 54,560,775 |
| Այլ եկամուտ, զուտ | | 218,923 | 110,741 |
| Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերությունից, զուտ | | 1,123,146 | 184,471 |
| **Տարվա արդյունք մինչև հարկումը** | | **1,342,069** | **295,212** |
| Շահութահարկ | | - | (3,817) |
| **Տարվա արդյունք** | | **1,342,069** | **291,394** |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | **-** | **-** |
| **Տարվա համապարփակ արդյունք** | | **1,342,069** | **291,394** |

*Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բաղինյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**Կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| | **Հիմնադիրների ներդրումներ**<br>ԱՄՆ դոլար | **Կուտակված հավելուրդ /(դեֆիցիտ)**<br>ԱՄՆ դոլար | **Ընդամենը**<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| **Առ 1 հունվարի 2021թ.** | **151,631** | **(90,556)** | **61,075** |
| Տարվա արդյունք | - | 291,394 | 291,394 |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **151,631** | **200,838** | **352,469** |
| Տարվա արդյունք | - | 1,342,069 | 1,342,069 |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **151,631** | **1,542,907** | **1,694,538** |

*Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բաղինյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| | 2022<br>ԱՄՆ դոլար | 2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| **Ստացված/(վերադարձված) ֆոնդեր** | | |
| ՄՆՏԶ (SILD) | 3,368,132 | 3,407,221 |
| ՄՆՏԶ ԼՖ (SILD AF) | 2,345,500 | 539,656 |
| ՍԱՔԾ (SSIP) | 13,620,263 | 17,693,923 |
| ՏՏԵԶ (LEID) | 3,942,480 | 7,223,376 |
| USAID | 1,566,775 | 1,522,174 |
| ՈՀԱԾ (ISMP) | 7,841,612 | 9,467,927 |
| Վեդի (VEDI) | 9,254,226 | 10,211,791 |
| ՋՌՀԿ (IWRM) | 1,436,105 | 397,730 |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3) | 10,055,466 | 10,673,059 |
| ԵՋՔԾ (YWIP) | 231,538 | 906,742 |
| Այլ | 2,173,919 | (98,994) |
| | **55,836,016** | **61,944,605** |
| **Ծրագրային ծախսեր** | | |
| ՄՆՏԶ (SILD) | (4,690,246) | (3,150,404) |
| ՄՆՏԶ ԼՖ (SILD AF) | (1,366,415) | (320,760) |
| ՍԱՔԾ (SSIP) | (19,145,849) | (11,331,892) |
| ՏՏԵԶ (LEID) | (4,840,170) | (5,941,995) |
| USAID | (1,814,816) | (1,503,272) |
| ՈՀԱԾ (ISMP) | (8,665,812) | (9,728,689) |
| Վեդի (VEDI) | (8,887,947) | (8,943,912) |
| ՋՌՀԿ (IWRM) | (1,486,227) | (402,240) |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3) | (8,832,279) | (10,667,105) |
| ԵՋՔԾ (YWIP) | (323,942) | (2,243,829) |
| Այլ | (1,619,037) | (1,426,051) |
| | **(61,672,740)** | **(55,660,148)** |
| Այլ գործառնական դրամական միջոցների հոսքեր, զուտ | 22,947 | (237) |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | **(5,813,777)** | **6,284,220** |
| Փոխարժեքային տարբերություններ | 566,798 | 134,731 |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **(5,246,979)** | **6,418,951** |
| **Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին** | **24,068,017** | **17,649,066** |
| **ԶՏԾԻԳ-ի միացումից դրամական մուտք (ծնթ. 1.2)** | **-** | **-** |
| **Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին** | **18,821,038** | **24,068,017** |

*Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բադիրյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**Կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| | Հիմնադիրների ներդրումներ<br>ԱՄՆ դոլար | Կուտակված հավելուրդ /(դեֆիցիտ)<br>ԱՄՆ դոլար | Ընդամենը<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| **Առ 1 հունվարի 2021թ.** | **151,631** | **(90,556)** | **61,075** |
| Տարվա արդյունք | - | 291,394 | 291,394 |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **151,631** | **200,838** | **352,469** |
| Տարվա արդյունք | - | 1,342,069 | 1,342,069 |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **151,631** | **1,542,907** | **1,694,538** |

*Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բաղինյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**
**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| | 2022 | 2021 |
|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| **Ստացված/(վերադարձված) ֆոնդեր** | | |
| ՄՆՏԶ (SILD) | 3,368,132 | 3,407,221 |
| ՄՆՏԶ ԼՖ (SILD AF) | 2,345,500 | 539,656 |
| ՍԱԲԾ (SSIP) | 13,620,263 | 17,693,923 |
| ՏՏԵԶ (LEID) | 3,942,480 | 7,223,376 |
| USAID | 1,566,775 | 1,522,174 |
| ՈՀԱԾ (ISMP) | 7,841,612 | 9,467,927 |
| Վեդի (VEDI) | 9,254,226 | 10,211,791 |
| ՋՌՀԿ (IWRM) | 1,436,105 | 397,730 |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3) | 10,055,466 | 10,673,059 |
| ԵԶԲԾ (YWIP) | 231,538 | 906,742 |
| Այլ | 2,173,919 | (98,994) |
| | **55,836,016** | **61,944,605** |
| **Ծրագրային ծախսեր** | | |
| ՄՆՏԶ (SILD) | (4,690,246) | (3,150,404) |
| ՄՆՏԶ ԼՖ (SILD AF) | (1,366,415) | (320,760) |
| ՍԱԲԾ (SSIP) | (19,145,849) | (11,331,892) |
| ՏՏԵԶ (LEID) | (4,840,170) | (5,941,995) |
| USAID | (1,814,816) | (1,503,272) |
| ՈՀԱԾ (ISMP) | (8,665,812) | (9,728,689) |
| Վեդի (VEDI) | (8,887,947) | (8,943,912) |
| ՋՌՀԿ (IWRM) | (1,486,227) | (402,240) |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3) | (8,832,279) | (10,667,105) |
| ԵԶԲԾ (YWIP) | (323,942) | (2,243,829) |
| Այլ | (1,619,037) | (1,426,051) |
| | **(61,672,740)** | **(55,660,148)** |
| Այլ գործառնական դրամական միջոցների հոսքեր, զուտ | 22,947 | (237) |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | **(5,813,777)** | **6,284,220** |
| Փոխարժեքային տարբերություններ | 566,798 | 134,731 |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **(5,246,979)** | **6,418,951** |
| **Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին** | **24,068,017** | **17,649,066** |
| **ԶՏԾԻԳ-ի միացումից դրամական մուտք (ծնթ. 1.2)** | **-** | **-** |
| **Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին** | **18,821,038** | **24,068,017** |

*Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Սարգիս Բադիրյան**
Գործադիր տնօրեն

**Լևոն Դուլյան**
Գլխավոր ֆինանսիստ

Բովանդակություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ........7
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........9
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........11
2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ........14
3. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ........20
4. ՍՏԱՑՎԵԼԻՔ ՖՈՆԴԵՐ ........21
5. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ........26
6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ........27
7. ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ........27
8. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ........28
9. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ........30
10. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ ........31
11. ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ ........32
12. ՀԱՐԿԵՐ ........34
13. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑԵՐ ........34
14. ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ........34

# 1. Ընդհանուր տեղեկություններ

## *1.1 Հիմնադրամը և գործունեությունը*

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամը (ՀՏԶՀ-ը կամ Հիմնադրամ) Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի (ՀՍՆՀ) իրավահաջորդն է 2015թ.-ից սկսած: ՀՏԶՀ-ն 04.08.2015թ.-ից գործունեությունը շարունակում է նոր կանոնադրության հիման վրա՝ շարունակելով ՀՍՆՀ-ի բնականոն գործունեությունը:

ՀՍՆՀ-ն ստեղծվել է 11.04.2000թ. միակ հիմնադիր ՀՀ Կառավարության № 162 որոշման համաձայն՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքներում փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը և կենսամակարդակի բարելավմանը աջակցելու նպատակով: ՀՍՆՀ-ն գրանցվել է 2000թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Արդարադատության նախարարության № 988 հրամանի համաձայն:

ՀՏԶՀ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0037, Ոււնեցու 31:

ՀՏԶՀ-ն իրականացրել է մի շարք հիմնական ծրագրեր՝ ՀՍՆՀ I, ՀՍՆՀ II, ՀՍՆՀ III, ՄՆՏԶ, ՍԱԲԾ և ՏՏԵԶ, որոնք ուղղված են.

- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Զարգացման Միջազգային Ընկերակցությունը (ԶՄԸ, IDA), Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը (ՎԶՄԲ, IBRD) և Ասիական Զարգացման Բանկը (ԱԶԲ, ADB) հանդիսանում են ամենախոշոր դոնորները, ինչպես նաև համաֆինանսավորվել են ՀՀ Կառավարության, տեղական համայնքների ու այլ հովանավորների կողմից:

## *1.2 ՋՏԾԻԳ-ի միացում*

Համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019թ.-ի N 170-Ն և 26.12.2019թ.-ի N 1966-N որոշումների, 2020թ.-ի սկզբից Հիմնադրամին է միացվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՋՏԾԻԳ) գործունեությունը:

ՋՏԾԻԳ-ի նախկին գործունեությունը շարունակվում է իրականացվել ամբողջությամբ, այդ թվում իր աշխատակազմի և ռեսուրսների միջոցով, որոնք միացվել են ՀՏԶՀ-ին՝ մասնաճյուղի կարգավիճակով, ինչպես նաև շարունակում է գործել նախկինում իրեն հատկացված տարածքում՝ ՀՀ Երևան, 0010, Վարդանանց փակուղի 8 հասցեով:

Մասնաճյուղի հիմնական գործունեության ուղղություններն են.

- Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցումը,
- Ոռոգման համակարգերի արդիականացումը,
- Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարումը,

- Երևանի ջրամատակարարման համակարգի բարելավումը,
- «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի իրականացումը:

Մասնաճյուղի ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Եվրասիական զարգացման բանկը (ԵԶԲ, EDB), Զարգացման ֆրանսիական գործակալությունը (ԶՖԳ, AFD), Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ, EIB), Վերակառուցման վարկերի բանկը (ՎՎԲ, KfW) հանդիսանում են ամենախոշոր դոնորները: Ծրագրերը համաֆինանսավորվել են ՀՀ Կառավարության և տեղական համայնքների կողմից:

### *1.3. Իրականացվող ծրագրեր*

31.12.2022թ.-ին ավարտվող տարում, ՀՏԶՀ-ն, ներառյալ իր մասնաճյուղը, իրականացրել է հետևյալ հիմնական ծրագրերը.

- **ՄՆՏԶ (SILD)** - “Սոցիալական Ներդրումների և Տարածքային Զարգացման” Ծրագիրը, որը ֆինանսավորվում է ՀՀ-ի և ՎԶՄԲ միջև 08.04.2015թ.-ին կնքված IBRD Loan Number 8483-AM համաձայնագրով՝ 30,000,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակի և հասանելիության բարելավումը: Ծրագիրն ուժի մեջ է մտել 22.09.2015թ.-ին: Վարկի ֆինանսավորումը ավարտվել է 31.12.2022թ.-ին

- **ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)**– «Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման նախագծի լրացուցիչ ֆինանսավորում»' Հայաստանի Հանրապետության եւ IBRD-ի միջեւ 2020 թվականի ապրիլի 21-ի թիվ 9060-AM վարկային համաձայնագրի ֆինանսավորմամբ' 17,900,000 EUR գումարի չափով: Ծրագրի նպատակն է բարելավել համայնքային եւ միջհամայնքային ենթակառուցվածքների որակը, օգտագործումը և հասանելիությունը: Ծրագիրն ուժի մեջ է մտել 08.12.2020թ.-in: Վարկի թիվ 9060-AM ֆինանսավորման փակման ամսաթիվը սահմանվում է 2025թ. մայիսի 31-ին:

- **ՍԱԲԾ (SSIP)** - “Սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագիր”, որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի և ՀՀ-ի միջև 19.10.2015թ. կնքված ADB Loan Number 3284-ARM վարկային համաձայնագրով՝ 83,600,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է կառուցել երկրաշարժադիմացկուն դպրոցներ և բարելավել բնական աղետներին արձագանքումը: ՍԱԲԾ ծրագրի ավարտը սահմանված է 31.05.2026թ.-ը:

- **ՏՏԵԶ (LEID)** - “Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման” Ծրագիր, որը ֆինանսավորվում է ՎԶՄԲ-ի և ՀՀ-ի միջև 23.02.2016թ. կնքված IBRD Loan Number 8572-AM վարկային համաձայնագրով՝ 55,000,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է Հայաստանի ընտրված մարզերում (Կոտայք, Վայոց Ձոր, Սյունիք, Լոռի, Արմավիր, Արարատ) տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ավելի մեծ մասնակցության համար ենթակառուցվածքային ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը: Մասնավորապես, Ծրագիրը աջակցում է բիզնես և ներդրումային միջավայրին՝ Փոքր և Միջին Ձեռնարկություններ (ՓՄՁ) ստեղծման, աճի, նորարարությունների համար: Ծրագիրն ուժի մեջ է մտել 29.12.2016թ.-ին: Ծրագրի հետ կապված աշխատանքները սկսվել են 21.04.2017թ.-ից: ՎԶՄԲ Վարկային համաձայնագիր 8572-AM վարկի ֆինանսավորման ավարտը սահմանված է 31.12.2024թ.-ը:

- USAID – "Տեղական կառավարման բարեփոխումների" Ծրագիր, որը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) և ՀՏԶՀ-ի միջև 10.08.2015թ. կնքված Իրականացման նամակի՝ 8,600,000 USD գումարի չափով. Ծրագրի նպատակն է ֆինանսավորել 14 փորձնական խոշորացվող համայքներում միջհամայնքային ծրագրերը: Ծրագրի ավարտվել է 30.09.2022թ.-ին:

- **ՈՀԱԾ (ISMP)** - Եվրասիական զարգացման բանկի (EDB) աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիրն իրականացվում է 16.10.2015թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 2016թ. հունիսի 10-ին: Ծրագրի նպատակն է Ոռոգման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում, այդ թվում մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով, մայր եվ երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնման և կառուցման աշխատանքներ, հիմնանորոգվող ցանցերի երկարությունը՝ 344,32 կմ, նոր կառուցվող ոռոգման ցանցերի երկարությունը՝ 67,18 կմ: Վարկի փակման ամսաթիվն է 31.12.2023թ.:

- **Վեդի (VEDI)** - Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD) աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն իրականացվում է 26.01.2016թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 2016թ. մայիսի 12-ին: Ծրագրի նպատակն է Վեդիի ջրամբարի/պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրառ հանգույցների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի, ինչպես նաև ջրամբարից ոռոգման ենթակա հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցում, որի արդյունքում ակնկալվում է Վեդի և Խոսրով գետերի վրա ջրառի ջրաթափ կառույցը և ջրի փոխադրող համակարգի կառուցում՝ 10,6 կմ, ոռոգման համակարգի կառուցում՝ 36,2 կմ, ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում՝ 60 կմ և ջրամբաբրի պատվարի կառուցում՝ 80 մ: Ծրագրի փակման ամսաթիվն է 30.09.2023թ. (թարմացված):

- **ՋՌՀԿ (IWRM)** - Վերակառուցման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1» BMZ-No. 2014.67.950 ծրագիրն իրականացվում է 19.12.2014թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 29.06.2015թ.: Ծրագրի նպատակն է Կապսի ջրամբարի կառուցում,կառուցվող պատվարի բարձրություն - 30 մ: Ծրագրի փակման և վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետը 30.06.2024թ.:

- **ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3)** - «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» BMZ N 2013 66 343 ծրագիր: Ծրագրի նպատակն է 11 քաղաքների և 41 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ (մասնակի) վերականգնման աշխատանքների և 560 գյուղական բնակավայրերից ընտրված որոշ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում: Իրականացվում է Վերակառուցման վարկերի բանկի աջակցությամբ 27.12.2013թ. կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 21.06.2014թ., Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ, որն ուժի մեջ է մտել 27.06.2014թ., ինչպես նաև Վերակառուցման վարկերի բանկի և Եվրամիության հարևանության գործիքի (ԵՄ ՀՆԳ) աջակցությամբ 14.05.2014թ. կնքված ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 21.06.2014թ.: Վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետը 31.12.2022թ., ներկայումս երկարաձգման փուլում է:

- ԵՋԲԾ (YWIP) - Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր, որն իրականացվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային բանկի (EIB) և ԵՄ Հարևանության ներդրումային ծրագրի (EU NIF) աջակցությամբ: EIB ֆինանսական պայմանագիրը ստորագրվել է 27.06.2014թ.-ին և ուժի մեջ է մտել 05.02.2015թ.: Ավարտման ամսաթիվը 31.12.2022թ, ներկայումս երկարաձգման փուլում է: ԵՄ NIF ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է 06.08.2014-ին և ուժի մեջ է մտել 04.11.2014-ին: Ավարտման ամսաթիվը 06.01.2025թ.: ՎԶԵԲ-ի դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվել է 11.06.2015թ.-ին և ուժի մեջ է մտել 24.06.2015թ.: Ավարտվել է 31.10.2021-ին:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1 Պատրաստման հիմունքները*

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն՝ ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

**ա) 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ**

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտները նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա.

- ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» (Փոփոխություն – Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագիրը կատարելու ծախսեր)
- ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցներ (Փոփոխություն – Նախքան նպատակային նշանակությամբ օգտագործում ստացվող մուտքեր)

**բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ**

Ստորև ներկայացված նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա.

- Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1-ի և
- ՖՀՄՍ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ)
- Պարտավորությունների դասակարգումը ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասերի (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ)

*2.2 Չափման հիմունքները*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

*2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը*

ՀՏԶՀ-ի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը: Այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

*2.4 Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ*

Հիմնադրամը գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:
Հաշվետու տարում առկա չեն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, որոնք կարող են հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

*Իրական արժեքի չափում*

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

• *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*

• *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
• *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*
Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

***2.5 Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում***
Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝
• Պարտքային ռիսկ
• Իրացվելիության ռիսկ:

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:
Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

***(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ***
Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.
- Ստացվելիք ֆոնդեր,
- Դրամական միջոցներ,
- Կրեդիտորական պարտքեր:

***(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների***

| | Ամորտիզացված արժեքով չափվող | |
|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ* | **31.12.2022թ.** | **31.12.2021թ.** |
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Ստացվելիք ֆոնդեր | 250,880,321 | 338,972,422 |
| Դրամական միջոցներ | 18,821,038 | 24,068,021 |
| | **269,701,359** | **363,040,443** |

| | Ամորտիզացված արժեքով չափվող | |
|---|---|---|
| *Ֆինանսական պարտավորություններ* | **2022թ.** | **2021թ.** |
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Կրեդիտորական պարտքեր | 8,725,702 | 7,785,098 |
| | **8,725,702** | **7,785,098** |

*(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ*

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են ստացվելիք ֆոնդերը, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, կրեդիտորական պարտքեր:
Դրամական միջոցների, ստացվելիք ֆոնդերի և դրանց համարժեքների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:
Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

*Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ*

Հիմնադրամի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:
Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:
Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:
Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

| | Մինչև 1 ամիս ԱՄՆ դոլար | 1-ից 3 ամիս ԱՄՆ դոլար | 3-ից 12 ամիս ԱՄՆ դոլար | 1-ից 5 տարի ԱՄՆ դոլար | 5 տարուց ավել ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | | | | |
| Կրեդիտորական պարտքեր | 1,343,065 | - | 2,729,212 | 4,653,425 | - |
| | **1,343,065** | **-** | **2,729,212** | **4,653,425** | **-** |
| **2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | | | | | |
| Կրեդիտորական պարտքեր | - | 369 | 1,213,620 | 6,571,848 | - |
| | **-** | **369** | **1,213,620** | **6,571,848** | **-** |

### *2.6 Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը ՀՏԶՀ-ի ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթն է:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:
ՀՏԶՀ-ի բանկային հաշիվները վարվում, իսկ գործարքներն իրականացվում են ԱՄՆ դոլարով (USD), Եվրոյով (EUR) և ՀՀ դրամով (AMD): ՀՀ դրամով և Եվրոյով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած միջին փոխարժեքով:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված USD միջին փոխարժեքները EUR-ի և AMD-ի նկատմամբ հետևյալն են.

| | 31.12.2022թ. դրությամբ | 31.12.2021թ. դրությամբ |
|---|---|---|
| AMD | 383,57 | 480.14 |
| EUR | 1,067 | 0.885 |

| | 2022թ. միջին փոխարժեք | 2021թ. միջին փոխարժեք |
|---|---|---|
| AMD | 434,86 | 503.81 |
| EUR | 1,057 | 0.844 |

### *2.7 Դրամաշնորհներ կառավարությունից*

Կառավարությունից ստացված դրամաշնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են ՀՏԶՀ կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.
ա) ՀՏԶՀ-ն կատարելու է դրամաշնորհներին հարակից պայմանները, և
բ) դրամաշնորհներն ստացվելու են:

Հիմնական միջոցների ձեռքբերմանը վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Ծախսերին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

### *2.8 Հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները՝ ըստ անհրաժեշտության: Ընթացիկ վերանորոգումները և պահպանման ծախսերը ծախսագրվում են նրանց կատարման պահին:
Հիմնական միջոցների բաղկացուցիչների փոխարինման ծախսերը կապիտալացվում են, իսկ փոխարինված բաղկացուցիչները ապաճանաչվում են:
Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ կիրառելով մաշվածության հետևյալ տարեկան տոկոսաչափերը՝

| | |
|---|---|
| Մեքենասարքավորումներ | 15%-30% |
| Տրանսպորտային միջոցներ | 12%-20% |
| Գրասենյակային գույք | 12%-20% |

### *2.9. Դրամական միջոցներ*

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

### *2.10. Կանխավճարներ*

Կանխավճարները հաշվառվում են՝ արժեքից հանելով արժեզրկումից կորուստները: Եթե կա հայտանիշ, որ կանխավճարի հետ կապված ակտիվը, ապրանքը կամ ծառայությունը չեն ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում, իսկ դրա համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

## 3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են ակտիվներ, որոնք ձեռք են բերվել ծրագրերի շրջանակներում ՀՏԶՀ-ում օգտագործման համար:

| | *Տրանսպորտային միջոցներ* | *Սարքավորումներ* | *Գրասենյակային գույք և այլն* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD |
| **Առ 1 հունվարի 2021թ** | **152,471** | **429,933** | **26,506** | **608,910** |
| Ձեռքբերումներ | - | 4,182 | 306 | 4,488 |
| Դուրսգրումներ | - | - | - | - |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ** | **152,471** | **434,115** | **26,812** | **613,398** |
| Ձեռքբերումներ | - | 44,970 | 975 | 45,945 |
| Դուրսգորմներ | (21,655) | - | - | (21,655) |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ** | **130,816** | **479,085** | **27,787** | **637,688** |
| Տարեկան մաշվածության ծախս | | | | |
| **Առ 1 հունվարի 2021թ** | **74,455** | **405,009** | **13,338** | **492,802** |
| Տարեկան ծախս | 12,641 | 12,005 | 3,003 | 27,649 |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ** | **87,096** | **417,014** | **16,341** | **520,451** |
| Տարեկան ծախս | 17,660 | 13,897 | 6,924 | 38,481 |
| | (14,482) | - | - | (14,482) |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ** | **90,274** | **430,911** | **23,265** | **544,450** |
| ***Հաշվեկշռային արժեք*** | | | | |
| **Առ 31 դեկտեմբերի 2021թ** | **65,375** | **17,100** | **10,471** | **92,946** |
| **Առ 31 դեկտեմբերի 2022թ** | **40,542** | **48,174** | **4,522** | **93,238** |

(ա) 31.12.2022թ. դրությամբ 397,166 ԱՄՆ դոլար (31.12.2021թ.՝ 365,519 ԱՄՆ դոլար) սկզբնական արժեքով հիմնական միջոցներն ամբողջությամբ մաշված են:

(բ) Հիմնադրամը իր գործությունենությունը իրականացնում է պետության կողմից անհատույց տրամադրված հետևյալ տարածքներում: Նշված տարածքների հաշվառումը իրականացնում է «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ի «կապիտալ» մոտեցման հիման վրա՝ զուտ մոտեցումով, որի համաձայն շնորհը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, ինչպես նաև այդ ստացված շնորհի զծով ակտիվներ կամ պարտավորություններ չեն ճանաչվում:

- ✓ Երևան, Ուլնեցու 31, 5-րդ և 6-րդ հարկ՝ ընդհանուր 1,456.8 քմ.;
- ✓ Երևան, Վարդանանց փակուղի 8 հասցեի 5-րդ հարկ՝ ընդհանուր 612.6 քմ.:

## 4. Ստացվելիք ֆոնդեր

 Իրենցից ներկայացնում են ՀՏԶՀ ծրագրերի իրականացման համար ստացվելիք ֆոնդերը.

| Ծրագիր | Ծնթ. | 31.12.2022<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|
| ՄՆՏԶ (SILD) | 4.1 | 30,442 | 3,358,416 |
| ՄՆՏԶ ԼՖ (SILD AF) | 4.1.ա | 24,220,326 | 27,107,031 |
| ՍԱՔԾ (SSIP) | 4.2 | 38,844,405 | 54,245,905 |
| ՏՏԵԶ (LEID) | 4.3 | 36,300,687 | 51,379,598 |
| USAID | 4.4 | 442,467 | 2,009,242 |
| ՈՀԱԾ (ISMP) | 4.5 | 13,305,171 | 21,146,783 |
| Վեդի (VEDI) | 4.6 | 7,491,886 | 17,854,920 |
| ՋՌՀԿ (IWRM) | 4.7 | 67,245,167 | 72,764,027 |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3) | 4.8 | 51,051,942 | 76,780,421 |
| ԵԶՔԾ (YWIP) | 4.9 | 11,937,860 | 12,169,398 |
| Այլ | | 9,968 | 156,681 |
| | | **250,880,321** | **338,972,422** |

### *4.1 ՄՆՏԶ (SILD)*

IBRD Loan 8483-AM վարկի ընդհանուր ֆինասավորումը 30,000,000 USD է: Վճարման արժույթը USD է:

| | IBRD 8483-AM<br>ԱՄՆ դոլար | ՀՀ Կառավա-րության համաֆինան սավորում<br>ԱՄՆ դոլար | Համայնքի ներդրում<br>ԱՄՆ դոլար | Դոնոր<br>ԱՄՆ դոլար | Ընդամենը<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|---|
| **Առ 31.12.2021** | **2,345,895** | **1,011,805** | **-** | **716** | **3,358,416** |
| Շնորհված | - | - | - | - | - |
| Այլ աճ/(նվազում) | | | 40,158 | - | 40,158 |
| Ստացված | (2,345,895) | (982,079) | (40,158) | - | (3,368,132) |
| **Առ 31.12.2022** | **-** | **29,726** | **-** | **716** | **30,442** |

### *4.1.ա. ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)*

IBRD Վարկ N 9060-AM *ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 17,900,000 եվրո; վճարման արժույթը Եվրո*

| | IBRD 9060-AM | ՀՀ Կառավա-րության | Համայնքի ներդրում | Դոնոր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | USD equivalent | USD | USD | USD | USD |
| **Առ 31.12.2021** | **19,116,835** | **6,805,497** | **1,184,699** | **-** | **27,107,031** |
| Շնորհված | - | - | - | - | - |
| Վերագնահատում | (340,307) | (130,181) | (23,434) | - | (493,922) |
| Ստացված | (797,943) | (644,414) | (950,426) | - | (2,392,783) |
| **Առ 31.12.2022** | **17,978,585** | **6,030,902** | **210,839** | **-** | 24,220,326 |

*Ֆինասավորմանը շարժը՝ հիմքային արժույթով՝ եվրոյով, հետևյալն է.*

| | IBRD 9060-AM | ՀՀ Կառավա-րության | Համայնքի ներդրում | Դոնոր | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | EUR | EUR | EUR | EUR | EUR |
| **Առ 31.12.2021** | **17,600,000** | **6,260,464** | **1,097,044** | **-** | **24,957,508** |
| Շնորհված | - | - | - | - | - |
| Ստացված | (755,188) | (609,886) | (899,501) | - | (2,264,575) |
| **Առ 31.12.2022** | **16,844,812** | **5,650,578** | **197,543** | **-** | **22,692,933** |

### *4.2 ՍԱԲԾ (SSIP)*

ADB Վարկ 3284-ARM *ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 63,259,000 SDR; վճարման արժույթը ԱՄՆ դոլար է:*

| | ADB Loan 3284-ARM | ՀՀ Կառավա-րության համաֆին- | Ընդամենը |
|---|---|---|---|
| | USD | USD | USD |
| **Առ 31.12.2021թ.** | **42,019,191** | **12,226,715** | **54,245,905** |
| Շնորհված | - | - | - |
| Վերագնահատում | (2,153,522) | - | (2,153,522) |
| Ստացված | (10,202,318) | (3,045,660) | (13,247,978) |
| **Առ 31.12.2022թ,** | **29,663,351** | **9,181,055** | **38,844,405** |

### *4.3 ՏՏԵԶ (LEID)*

IBRD Վարկ 8572-AM *ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 42,800,000 ԱՄՆ դոլար; վճարման արժույթը ԱՄՆ դոլար է:*

| | IBRD 8572-AM | ՀՀ Կառավա-րության համաֆին- | Ընդամենը |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Առ 31.12.2021թ.** | **40,827,938** | **10,551,660** | **51,379,598** |
| Շնորհված | (12,200,000) | 1,063,569 | (11,136,431) |
| Ստացված | (2,992,875) | (949,605) | (3,942,480) |
| **Առ 31.12.2022թ.** | **25,635,063** | **10,665,624** | **36,300,687** |

### *4.4 USAID*

*USAID ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 8,600,000 ԱՄՆ դոլար; վճարման արժույթը ԱՄՆ դոլար է:*

| | USAID շնորհ | Համայքի ներդրում | Ընդամենը |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Առ 31.12.2021թ.** | **1,535,500** | **473,742** | **2,009,242** |
| Շնորհված | - | - | - |
| Ստացված | (1,535,500) | (31,275) | (1,566,775) |
| **Առ 31.12.2022թ.** | **-** | **442,467** | **442,467** |

### *4.5 ՈՀԱԾ (ISMP)*

ISPM *ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 40,000,000 ԱՄՆ դոլար; վճարման արժույթը ԱՄՆ դոլար է:*

| | EDB | ՀՀ Կառավա-րության համաֆինան | Համայնքի ներդրում | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Առ 31.12.2021թ** | **16,769,529** | **4,110,816** | **266,437** | **21,146,783** |
| Շնորհված | - | - | - | - |
| Ստացված | (6,517,754) | (1,275,778) | (48,080) | (7,841,612) |
| **Առ 31.12.2022թ.** | **10,251,775** | **2,835,038** | **218,357** | **13,305,171** |

### *4.6 Վեդի (VEDI)*

AFD վարկ No. CAM 1002 01 Y *ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 75,003,631 եվրո, ինչպես նաև դրամաշնորհներ No CAM 1004 01 N CAM 1013 01 A ընդհանուր գումարով 390,350; վճարման արժույթը եվրո է:*

| | AFD | ՀՀ Կառավա- րության համաֆինան | Ընդամենը |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար համարժեք | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Առ 31.12.2021թ.** | **13,794,028** | **4,060,892** | **17,854,920** |
| Շնորհված | - | (2,171) | (2,171) |
| Վերագնահատում | (843,117) | (263,520) | (1,106,637) |
| Ստացված | (7,610,501) | (1,643,725) | (9,254,226) |
| **Առ 31.12.2022թ.** | **5,340,410** | **2,151,476** | 7,491,886 |

*Ստացվելիք ֆինանսավորման շարժը՝ հիմքային արժույթով, եվրոյով, հետևյալն է.*

| | AFD | ՀՀ Կառավա- րության համաֆինան | Ընդամենը |
|---|---|---|---|
| | Եվրո | Եվրո | Եվրո |
| **Առ 31.12.2021թ.** | **12,205,939** | **3,593,367** | **15,799,306** |
| Շնորհված | - | (1,991) | (1,991) |
| Ստացված | (7,202,308) | (1,575,577) | (8,777,885) |
| **Առ 31.12.2022թ** | **5,003,631** | **2,015,799** | **7,019,430** |

### *4.7 ՋՌՀԿ (IWRM)*

KfW Վարկ BMZ-No2014.67.950 *ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 50,000,000 եվրո, ինչպես նաև 300,000 եվրո դրամաշնորհ; վճարման արժույթը եվրո է:.*

| | KFW | ՀՀ Կառավա- րության համաֆինան | Ընդամենը |
|---|---|---|---|
| | ԱՄՆ դոլար համարժեք | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| **Առ 31.12.2021թ.** | **52,592,129** | **20,171,898** | **72,764,027** |
| Շնորհված | - | - | - |
| Վերագնահատում | (2,962,816) | (1,119,939) | (4,082,755) |
| Ստացված | (876,955) | (559,150) | (1,436,105) |
| **Առ 31.12.2022թ** | **48,752,358** | **18,492,809** | **67,245,167** |

Ստացվելիք ֆինանսավորումը հիմքային արժույթով՝ եվրոյով, հետևյալն է

| | KFW | ՀՀ Կառավա-րության համաֆինան | Ընդամենը |
|---|---|---|---|
| | EUR | EUR | EUR |
| **Առ 31.12.2021թ.** | **46,537,264** | **17,849,533** | **64,386,797** |
| Շնորհված | - | - | - |
| Ստացված | (859,348) | (522,925) | (1,382,273) |
| **Առ 31.12.2022թ** | **45,677,916** | **17,326,608** | **63,004,524** |

### *4.8 ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3)*

*KfW վարկ BMZ N 2013 66 343 ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 30,000,000 EUR, EIB վարկ FIN 82.043 Separis 2012-0322 ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 25,500,000 EUR, EU-NIF Grant BMZ N 2013, EU-NIF Grant IG6 2020 EUR, EU-NIF Grant IG6 2020 ֆինանսավորումը կազմում է 1,114,165 եվրո: Վճարման արժույթը եվրո է:*

| | KFW | EU-NIF | EIB | ՀՀ Կառավա-րության | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | USD equivalent | USD equivalent | USD equivalent | USD | USD |
| **Առ 31.12.2021թ.** | **25,107,820** | **13,278,973** | **24,749,363** | **13,644,265** | **76,780,421** |
| Շնորհված | - | - | (10,000,000) | (2,000,000) | (12,000,000) |
| Վերագնահատո | (1,500,619) | (739,170) | (748,185) | (685,039) | (3,673,013) |
| Ստացված | (2,840,921) | (15,885) | (5,400,533) | (1,798,127) | (10,055,466) |
| **Առ 31.12.2022թ** | **20,766,280** | **12,523,918** | **8,600,645** | **9,161,099** | **51,051,942** |

*Ֆոնդերի շարժը հիմքային արժույթով՝ եվրոյով, հետևյալն է.*

| | KFW | EU-NIF | EIB | ՀՀ Կառավա-րության համաֆինան | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | EUR | EUR | EUR | EUR | EUR |
| **Առ 31.12.2021թ.** | **22,217,189** | **11,750,182** | **21,900,000** | **12,073,419** | **67,940,789** |
| Շնորհված | - | - | (8,841,733) | (1,768,347) | (10,610,080) |
| Ստացված | (2,760,481) | (16,052) | (5,000,000) | (1,721,693) | (9,498,226) |
| **Առ 31.12.2022թ** | **19,456,708** | **11,734,130** | **8,058,267** | **8,583,379** | **47,832,483** |

*4.9 ԵՋՔԾ (YWIP)*

*YWIP* ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 14,000,000 ԱՄՆ դոլար: ԵՆԲ-ի միջոցներ՝ 7,000,000 ԱՄՆ դոլար և ԵՄ-ՆԻՖ փոնդեր՝ 7,000,000 ԱՄՆ դոլար; ինչպես նաև EBRD Grant 809,621 EUR; վճարման արժույթը ԱՄՆ դոլար է:

| | EIB<br>USD | EU-NIF<br>USD | ՀՀ Կառավա-րության համաֆինան<br>USD | Ընդամենը<br>USD |
|---|---|---|---|---|
| **Առ 31.12.2021թ.** | **4,700,000** | **4,700,000** | **2,769,398** | **12,169,398** |
| Շնորհված | - | - | - | - |
| Ստացված | - | - | (231,538) | (231,538) |
| **Առ 31.12.2022թ** | **4,700,000** | **4,700,000** | **2,537,860** | **11,937,860** |

## 5. Կանխավճարներ

| | 31.12.2022<br>USD | 31.12.2021<br>USD |
|---|---|---|
| Շինարարական աշխատանքների գծով | 15,777,055 | 19,145,229 |
| Այլ | 79,138 | 311,453 |
| | **15,856,398** | **19,456,683** |
| **Կանխավճարները ըստ ծրագրերի** | | |
| ՍԱՔԾ (SSIP) | 8,380,280 | 7,853,920 |
| ՏՏԵԶ (LEID) | 1,122,964 | 1,822,085 |
| ՈՀԱԾ (ISMP) | 1,650,961 | 908,511 |
| Վեդի (VEDI) | 1,242,612 | 2,742,228 |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3) | 3,364,454 | 5,699,326 |
| Այլ ծրագրեր | 95,127 | 430,614 |
| | **15,856,398** | **19,456,683** |

ա/ Մինչև 20% կանխավճար տրամադրվում է շինարարական աշխատանքներ իրականցնող կազմակերպություններին՝ համապատասխան բանկային երաշխիքների ստացման դեպքում:

## 6. Դրամական միջոցներ

| | Ծրագիր | Արժույթ | 31.12.2022 ԱՄՆ դոլար | 31.12.2021 ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| Նպատակային հաշիվ (IBRD 8283-AM) | ՄՆՏԶ (SILD) | USD | 315,199 | 1,400,854 |
| Նպատակային հաշիվ (IBRD 9060-AM) | ՄՆՏԶ ԼՖ (SILD AF) | EUR | 188,522 | - |
| Դեպոզիտային հաշիվ (ADB 3284-ARM) | ՍԱԲԾ (SSIP) | USD | 4,543,572 | 10,219,166 |
| Նպատակային հաշիվ (IBRD 8572) | ՏՏԵԶ (LEID) | USD | 500,857 | 1,378,308 |
| Նպատակային հաշիվ (EDB) | ՈՀԱԾ (ISMP) | USD | 2,044,549 | 2,617,357 |
| Համայնքային համաֆինանսավորում | ՈՀԱԾ (ISMP) | AMD | 133,999 | 295,027 |
| Նպատակային հաշիվ (AFD) | Վեդի (VEDI) | EUR | 5,708,089 | 5,569,031 |
| Նպատակային հաշիվ (KFW) | ՀԵԾ-II Փուլ 2, 3 | EUR | 1,381,552 | 45,803 |
| Նպատակային հաշիվ | ԵԶԶԾ (YWIP) | USD | 400,692 | 485,099 |
| Այլ հաշիվներ | | USD | 19 | - |
| Այլ հաշիվներ | | AMD | 3,603,988 | 2,057,376 |
| | | | 18,821,038 | 24,068,021 |

## 7. Հիմնադիրների ներդրումներ

ՀՏԶՀ-ի միակ հիմնադիրը ՀՀ Կառավարությունն է: Հիմնադիրը ներդրել է հիմնական միջոցներ՝ 151,631 ԱՄՆ դոլար գնահատված արժեքով: Նշված հիմնական միջոցները 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված են:

## 8. Դրամաշնորհներ կառավարությունից

ՀՏԶՀ-ի կողմից ծրագրերի իրականացման համար ստացված դրամաշնորհների շարժը հետևյալն է՝

| 31.12.2022թ. ավարտված տարի | SILD | SILD AF | SSIP | LEID | USAID | ISMP | VEDI | IWRM | CIP II-P2,P3 | YWIP | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD |
| **Սկզբնական մնացորդ** | **5,533,177** | **27,426,720** | **71,823,006** | **54,353,709** | **2,257,158** | **24,153,935** | **20,630,001** | **72,796,701** | **81,916,962** | **12,654,564** | **906,572** | **374,452,505** |
| Ստացված դրամաշնորհներ | - | - | - | (11,136,431) | - | - | (2,171) | - | (12,000,000) | - | 1,128,828 | **(22,009,774)** |
| Այլ աճ/ (նվազում) | 40,158 | - | - | - | - | - | - | - | - | - | (102,117) | **(61,959)** |
| Վերագնահատում | (1) | (522,341) | (1,781,210) | 56 | 2,982 | (84,818) | (1,182,774) | (3,998,445) | (3,830,440) | 2,017 | (580,318) | **(11,975,292)** |
| Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ | (4,969,968) | (1,522,466) | (20,226,212) | (5,648,791) | (1,826,290) | (7,449,117) | (9,616,575) | (1,552,738) | (11,631,272) | (317,957) | (413,339) | **(65,174,725)** |
| **Վերջնական մնացորդ** | **603,366** | **25,381,913** | **49,815,584** | **37,568,543** | **433,850** | **16,620,000** | **9,828,481** | **67,245,518** | **54,455,250** | **12,338,624** | **939,626** | **275,230,755** |

| **31.12.2021թ. ավարտված տարի** | SILD | SILD AF | SSIP | LEID | USAID | ISMP | VEDI | IWRM | CIP II-P2,P3 | YWIP | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD |
| **Սկզբնական մնացորդ** | **8,288,754** | **-** | **81,455,810** | **59,182,452** | **3,763,101** | **36,851,584** | **35,270,706** | **79,382,849** | **96,969,954** | **14,062,854** | **2,409,262** | **417,637,326** |
| Ստացված դրամաշնորհներ | - | 27,646,686 | - | - | - | | 555,189 | - | - | 300,506 | 20,250 | **28,522,631** |
| Այլ աճ/ (նվազում) | 198,964 | - | - | - | - | - | - | - | - | - | - | **198,964** |
| Վերագնահատում | - | - | (1,539,460) | - | - | (127,615) | (2,159,789) | (6,228,916) | (7,290,783) | 923 | - | **(17,218,948)** |
| Փոխհատուցվող ծախսերի համապատասխան եկամուտ | (2,954,541) | (219,967) | (8,093,344) | (4,828,743) | (1,505,943) | (12,570,034) | (13,036,105) | (357,232) | (7,762,209 ) | (1,709,718) | (1,522,940) | **(54,560,776)** |
| **Վերջնական մնացորդ** | **5,533,177** | **27,426,720** | **71,823,006** | **54,353,709** | **2,257,158** | **24,153,935** | **20,630,001** | **72,796,701** | **81,916,962** | **12,654,564** | **906,572** | **374,452,505** |

## 9. Կրեդիտորական պարտքեր

| | 31.12.2022<br>ԱՄՆ դոլար | 31.12.2021<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Շինարարական աշխատանքների գծով | 7,161,624 | 7,511,121 |
| Այլ | 1,564,078 | 273,977 |
| | **8,725,702** | **7,785,098** |
| **Կրեդիտորական պարտքերը ըստ ծրագրերի** | | |
| ՍԱԲԾ (SSIP) | 1,717,016 | 491,121 |
| ՏՏԵՁ (LEID) | 236,162 | 226,566 |
| ՈՀԱԾ (ISMP) | 514,704 | 813,786 |
| Վեդի (VEDI) | 4,653,425 | 5,569,536 |
| ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2, P3) | 1,342,699 | 567,418 |
| Այլ | 261,696 | 116,671 |
| | **8,725,702** | **7,785,098** |

ա) Պահումները կատարվում են ծառայությունների դիմաց դուրս գրված հաշիվների 10% չափով `Վեդի (VEDI) ծրագրի շրջանակում, 5% չափով՝ ՄՆՏՁ, ՏՏԵՁ, ՍԱԲԾ և ՈՀԱԾ (ISMP) ծրագրերի շրջանակում, մինչև մեկ տարի ժամկետով՝ որպես աշխատանքի որակի երաշխիք:

## 10. Ծրագրային ծախսեր

| 31.12.2022թ. ավարտվող տարի | SILD | SILD AF | SSIP | LEID | USAID | ISMP | VEDI | IWRM | CIP II-P2,P3 | YWIP | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD |
| Աշխատանքներ | 1,043,628 | 707,034 | 19,259,256 | 4,789,506 | - | 6,191,314 | 9,109,571 | - | 9,807,322 | - | 66,841 | 50,974,472 |
| Ապրանքներ | 3,725,558 | - | - | - | 1,756,515 | 238,679 | - | - | - | - | - | 5,720,752 |
| Խորհրդատվական ծառայություններ և | 76,726 | 141,992 | 750,399 | 752,872 | 51,093 | 704,926 | 370,391 | 1,408,639 | 1,823,950 | 95,206 | 311,331 | 6,487,525 |
| Գործառնական ծախսեր | 102,517 | 673,440 | 216,348 | 106,239 | 7,208 | 314,178 | 131,024 | 144,078 | - | 222,747 | 35,167 | 1,952,946 |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 21,539 | - | 209 | 174 | 11,474 | 20 | 5,589 | 21 | - | 4 | - | 39,030 |
| **Ընդամենը** | 4,969,968 | 1,522,466 | 20,226,212 | 5,648,791 | 1,826,290 | 7,449,117 | 9,616,575 | 1,552,738 | 11,631,272 | 317,957 | 413,339 | **65,174,725** |

| 31.12.2021թ. ավարտվող տարի | SILD | SILD AF | SSIP | LEID | USAID | ISMP | VEDI | IWRM | CIP II-P2,P3 | YWIP | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD |
| Աշխատանքներ | 896,302 | 218,904 | 7,313,393 | 4,345,054 | - | 11,728,246 | 12,081,176 | - | 6,897,452 | 1,259,854 | 954,457 | 45,694,838 |
| Ապրանքներ | 1,224,233 | - | - | - | 1,412,044 | - | - | - | - | 20,076 | 170,015 | 2,826,368 |
| Խորհրդատվական ծառայություններ և | 142,007 | 1,034 | 581,415 | 380,289 | 85,476 | 566,767 | 865,200 | 232,919 | 864,756 | 229,473 | 360,611 | 4,309,947 |
| Գործառնական ծախսեր | 674,971 | 29 | 198,451 | 103,249 | 5,544 | 274,496 | 82,760 | 124,305 | - | 200,313 | 37,858 | 1,701,976 |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 17,028 | - | 85 | 151 | 2,880 | 525 | 6,969 | 7 | - | 3 | - | 27,648 |
| **Ընդամենը** | **2,954,541** | **219,967** | **8,093,344** | **4,828,743** | **1,505,943** | **12,570,034** | **13,036,105** | **357,232** | **7,762,208** | **1,709,718** | **1,522,940** | 54,560,775 |

## 11. Դրամական հոսքեր ըստ ծրագրերի

| 31.12.2022թ. ավարտվող տարի | SILD | SILD AF | SSIP | LEID | USAID | ISMP | VEDI | IWRM | CIP II-P2,P3 | YWIP | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD |
| **Ստացված/ (վերադրաձված) ֆոնդեր** | **3,368,132** | **2,345,500** | **13,620,263** | **3,942,480** | **1,566,775** | **7,841,612** | **9,254,226** | **1,436,105** | **10,055,466** | **231,538** | **2,173,919** | **55,836,016** |
| Վարկ/շնորհ | 2,345,895 | 750,660 | 10,202,318 | 2,992,875 | 1,535,500 | 6,517,754 | 7,610,501 | 876,955 | 8,206,743 | - | 200,000 | 41,239,201 |
| ՀՀ Կառավարություն | 982,079 | 644,414 | 3,045,660 | 949,605 | - | 1,275,778 | 1,643,725 | 559,150 | 1,848,723 | 231,538 | 1,973,919 | 13,154,591 |
| Համայնքի ներդրում | 40,158 | 950,426 | - | - | 31,275 | 48,080 | - | - | - | - | - | 1,069,939 |
| Այլ հովանավորներ | - | - | 372,285 | - | - | - | - | - | - | - | - | 372,285 |
| | | | | | | | | | | | | |
| **Ծրագրային ծախսեր** | **(4,690,246)** | **(1,366,415)** | **(19,145,849)** | **(4,840,170)** | **(1,814,816)** | **(8,665,812)** | **(8,887,947)** | **(1,486,227)** | **(8,832,279)** | **(323,942)** | **(1,619,037)** | **(61,672,740)** |
| Աշխատանքներ | (843,336) | (552,415) | (18,178,079) | (3,980,994) | - | (7,352,204) | (8,118,818) | - | (7,179,703) | - | (1,039,544) | (47,245,093) |
| Ապրանքներ | (3,667,668) | - | - | - | (1,810,589) | (278,124) | (16,057) | - | - | - | (579,493) | (6,351,931) |
| Խորհրդատվություն և ուսուցում | (76,725) | (140,560) | (751,396) | (752,883) | - | (720,120) | (628,732) | (1,342,254) | (1,652,576) | (101,204) | - | (6,166,450) |
| Գործառնական ծախսեր | (102,517) | (673,440) | (216,374) | (106,293) | (4,227) | (315,364) | (124,340) | (143,973) | - | (222,738) | - | (1,909,266) |
| | | | | | | | | | | | | |
| Այլ գործառնական հոսքեր (զուտ) | - | (11,111) | (10) | - | - | - | - | - | - | - | 34,068 | **22,947** |
| | | | | | | | | | | | | |
| Արտարժույթի օգուտ/(կորուստ) | 121,492 | 64,544 | 116,440 | 20,260 | 15,671 | 90,364 | (227,221) | 50,122 | 112,562 | 7,998 | 194,566 | **566,798** |
| | | | | | | | | | | | | |
| **Դրամական զուտ հոսք** | **(1,200,622)** | **1,032,518** | **(5,409,156)** | **(877,430)** | **(232,370)** | **(733,836)** | **139,058** | **-** | **1,335,749** | **(84,406)** | **783,516** | **(5,246,979)** |
| **Սկզբնական մնացորդ** | **1,941,908** | **222,674** | **10,219,164** | **1,378,306** | **244,890** | **2,912,385** | **5,569,030** | **-** | **45,803** | **485,099** | **1,048,758** | **24,068,017** |
| **Վերջնական մնացորդ** | **741,286** | **1,255,192** | **4,810,008** | **500,876** | **12,520** | **2,178,548** | **5,708,089** | **-** | **1,381,552** | **400,693** | **1,832,274** | **18,821,038** |

| 31.12.2021թ. ավարտվող տարի | SILD | SILD AF | SSIP | LEID | USAID | ISMP | VEDI | IWRM | CIP II-P2,P3 | YWIP | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD | USD |
| **Ստացված/ (վերադրաձված) ֆոնդեր** | **3,407,221** | **539,656** | **17,693,923** | **7,223,376** | **1,522,174** | **9,467,927** | **10,211,791** | **397,730** | **10,673,059** | **906,742** | **(98,994)** | **61,944,605** |
| Վարկ/շնորհ | 2,248,634 | 354,961 | 15,818,280 | 6,039,642 | 1,339,500 | 7,207,517 | 8,327,308 | 200,617 | 9,470,107 | 400,005 | 9,773 | 51,416,345 |
| ՀՀ Կառավարություն | 959,622 | 80,339 | 1,875,643 | 1,183,734 | - | 2,036,644 | 1,884,484 | 197,112 | 1,202,952 | 506,738 | (219,367) | 9,707,900 |
| Համայնքի ներդրում | 198,964 | 104,356 | - | - | 182,674 | 223,766 | - | - | - | - | 1,678 | 711,439 |
| Այլ հովանավորներ | - | - | - | - | - | - | - | - | - | - | 108,922 | 108,922 |
| | | | | | | | | | | | | |
| **Ծրագրային ծախսեր** | **(3,150,404)** | **(320,760)** | **(11,331,892)** | **(5,941,995)** | **(1,503,272)** | **(9,728,689)** | **(8,943,912)** | **(402,240)** | **(10,667,105)** | **(2,243,829)** | **(1,426,051)** | **(55,660,148)** |
| Աշխատանքներ | (1,106,364) | (319,697) | (10,551,683) | (5,458,163) | - | (8,884,371) | (8,287,904) | - | (9,992,036) | (1,585,864) | (843,643) | (47,029,725) |
| Ապրանքներ | (1,227,063) | - | - | - | (1,412,253) | - | - | - | - | (20,141) | (154,703) | (2,814,159) |
| Խորհրդատվություն և ուսուցում | (142,007) | (1,034) | (581,342) | (380,083) | (85,475) | (568,989) | (567,888) | (277,584) | (675,069) | (437,440) | (387,372) | (4,104,283) |
| Գործառնական ծախսեր | (674,971) | (30) | (198,867) | (103,748) | (5,544) | (275,328) | (88,120) | (124,656) | - | (200,384) | (40,334) | (1,711,981) |
| | | | | | | | | | | | | |
| Այլ գործառնական հոսքեր (զուտ) | 24 | - | (260) | - | - | - | - | - | - | - | - | **(237)** |
| | | | | | | | | | | | | |
| Արտարժույթի օգուտ/(կորուստ) | 56,865 | 3,778 | 3,461 | 12,870 | 8,394 | 54,825 | (189,361) | 4,510 | 39,839 | 14,054 | 125,496 | **134,731** |
| | | | | | | | | | | | | |
| **Դրամական զուտ հոսք** | **313,705** | **222,674** | **6,365,232** | **1,294,251** | **27,296** | **(205,937)** | **1,078,518** | **-** | **45,793** | **(1,323,032)** | **(1,399,549)** | **6,418,951** |
| **Սկզբնական մնացորդ** | **1,628,203** | **-** | **3,853,932** | **84,055** | **217,594** | **3,118,322** | **4,490,512** | **-** | **10** | **1,808,131** | **2,448,307** | **17,649,066** |
| **Վերջնական մնացորդ** | **1,941,908** | **222,674** | **10,219,164** | **1,378,306** | **244,890** | **2,912,385** | **5,569,030** | **-** | **45,803** | **485,099** | **1,048,758** | **24,068,017** |

## 12. Հարկեր

Կիրառելի հարկերը հաշվարկվում և վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենքների համաձայն:
Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 2022թ.-ի համար սահմանված է 18% է (2021թ.՝ 18%):

## 13. Դատական հայցեր

ՀՏԶՀ-ի կամ նրա իրականացված ծրագրերի դեմ էական պահանջներ չկան հաշվետու ամսաթվի և այս հաշվետվությունների կազմման ամսաթվի դրությամբ:հետ պայմանագիրը լուծելու և պատաճառած վնասը հատուցելու մասին:

## 14. ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

| Հոդված | Իրական արժեք ԱՄՆ դոլար | Գնահատման մեթոդ | Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ | Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ |
|---|---|---|---|---|
| Ստացվելիք ֆոնդեր | 25,880,321 | *Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին: | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |
| Կրեդիտորական պարտքեր | 8,725,702 | *Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին: | Մակարդակ 3 | Կիրառելի չէ |